Տ. ԴԱՎԻԹ ԱԲԵՂԱ ՔԱՐԱՄՅԱՆ
(ավազանի անունը՝ Կարեն)

Ծնվել է 1979 թ. հուլիսի 18-ին Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղում:

1986-1996 թթ. սովորել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

1996-2001 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2001 թ. մարտ-մայիս ամիսներին Ռումինիայում մասնակցել է Ցաշ քաղաքի «Ս. Նիկոլա» համալսարանում ԵՀԽ-ի կողմից կազմակերպված անգլերեն լեզվի եռամսյա դասընթացներին:

2001-2002 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2001 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ավարտելուց հետո, աշխատել է նախ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնում, ապա՝ Կաթողիկոսարանում:

2002 թ. հոկտեմբերի 31-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Մայր Աթոռը և Շահամիրյանները» թեմայով:

2002 թ. նոյեմբերի 17-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Առաքել եպս. Քարամյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: